սելով («բանքս այս ի բանս կարդի առակաց»)։ Թէ՝ Սէգ Տր՛դատր այնքան քաջ է եղել, դիւցազնական այժով օժտուած, որ սիզալով՝ դեռերի թումբե՛ր է աւերել, ծովի յորձանքնե՛ր ցամաքեցրել։

Յաջորդ տողերն եւս պարզապէս վիպական-առասպելական տարր են պարունակում, թէեւ Ագաթանգեղոս (չէ՞ որ, իր իսկ ասելով, «Տրդատի քարտուղարն» է եղած ինք) ըստ երեւոյթին իր տեսածն է ուզում նկարագրել։ «Վասնզի սէգ իսկ էր առ հանդերձ, եւ այլ ուժով պնդութեան հաստատութեամբ բուռն ոսկերօք եւ յաղթ մարմնով, քաջ եւ պատերազմող անհնարին, բարձր եւ լայն հասակաւ, որ զժամանակս կենաց իւրոց պատերազմեալ եւ առնէր մարտից յաղթութիւն։ Մեծ անուն պարծանաց քաջութեան անձին ստանայր, եւ զհակակ չքեղութիւն յաղթութեան ընդ ամենայն աշխարհ կացուցանէր։ Հարկանէր ի հարուածս զթշնամիսն, եւ խնդրէր զբէնս վրիժուց իւրոց հայրենեացն...» («Ագաթանգեղեայ Պատմութիւն», Թիֆլիս 1882, էջ 81)։ Մի կատաբելաւ հսկայ, դիւցազուն։

Տրդատի նկարագրի վիպական այդ դիծը աւելի պարզ երեւում է հետեւեալ տողերից։ Թէեւ Լուսաւորչի կողմից արդէն դարձի բերուած, բայց դեռ եւս իր «հիւանդութիւնից» չբուժուած՝ սէգ Տրդատը «եօթնօրեայ ճանապարհ» է կտրում-անցնում, «ի բարձր լեառն Մասիս», այնտեղից վէմ քարեր բերելու եւ իր նահատակել տուած կոյսերին ի յիշատակ վկայարաններ շինելու համար։

«Եւ այնտեղից, լերան կատարից», շարունակում է Ագաթանգեղոս, «անուաչ որձաքար վէմեր է առնում (Տրդատ),— անկոփ, յաղթ, ծանր, երկայն եւ հաստ ու մեծ-մեծ ժայռեր, որ անկարող էին մարդիկ թէկուզ հաս-հաս տեղից չարժել, մինչեւ իսկ բազմութիւններով։ Բայց, սկայազօր հայկաբար առնում է (մեն-մենակ) ութ հատ արձաններ (վէմ քարեր), թիկունքի վրայ դնում եւ իր մէջքով բերում, վկայարան տաճարների համար» (էջ 446)։

Անկախ այս տողերի բովանդակութիւնից իսկ, որ Տրդ Աւգեղի առասպելն է յիշեցնում, սկայազօր եւ հայկաբար բառերն արդէն հատուկ են վերոյիշեալ հատուածի վիպական յատկանիշը։ Հայկ Նահապետը երկա՛ր դարեր հայ ժողովուրդի հոգում ապրել է իբրեւ սկայ (հսկայ), մարմնացումն քաջութեան եւ սեփական երկրի անկախութեան։ Այն աստիճան որ, հինգերորդ դարում, դեռ եւս Հայկը ոչ միայն, յատուկ, այլ եւ հասարակ անուն էր հայոց լեզուի մէջ. «հայկարար գործել» նշանակում էր հսկայաբար, դիւցազնաբար գործել։

Առասպելական — լեգենդական դիծ է նաեւ Ագաթանգեղոսի նկարագրութիւնը Տրդատի «հիւանդութեան» մասին, իբր արդիւնք Մ. Գրիգորի եւ քրիստոնէութեան դէմ յարուցած հալածանքների։ Ահա այդ կտորը։

Տրդատ հրամայում է իր զօրականներին՝ պատրաստութիւններ տեսնել, պատսականներ (որսի շներ) ժողվել, որսի համար ցանցեր վերցնել՝ լերան ստորոտները որսի երթալու համար (յիշեցէք Արտաւազդի առասպելը), բայց՝ հաղիւ «թագաւորը կառք ելաւ եւ ուզում էր քաղաքից դուրս երթալ, անմիջապէս պատուհաս իջաւ՝ վրան, Տիրոջ կողմից. թագաւորին պղծօրէն այսահար անելով՝ կառքից վայր կործանեց։ Տեղւոյն վրայ մոլեգնիլ սկսաւ նա, ինքն իր մարմինը ուտել։

Ըստ նմանութեան բաբելացոց Նաբուգոնոսոր արքայի՝ մարդկային տեսքից զրկուեցաւ եւ վայրենի խոզերի կերպարանք առաւ։ Եւ իրրեւ մէկը դոցանից՝ դնաց եւ բնակեցաւ մէջները։ Եւ մոռնալով եղեղնատը՝ խոտաճարակ եղաւ իրրեւ կատարեալ անբան արարած, իր մերկ անձը դաչտերում քաշքշելով։ Ու թէպէտեւ քաղաքում եղողները կամեցան արդիլել նորան այդ, բայց չկարացին, մէկ՝ իր բնական ոյժի պատճառով, մէկ էլ՝ իր մէջ բուն դրած Դեւերի ոյժի պատճառով» (էջ 128–129)։

Մի ուրիշ հատուածում (էջ 425) լրացւում է այդ նկարագրութիւնը այս կերպ. «Թագաւորը կերպարանափոխուել էր եւ նմանում էր աղբեւայրդ (աղբերի մէջ մեծացած) խոզերի։ Ամբողջ մարմինը թաւացել էր։ Ոսկորների վրայ բուսել էր խոպանատեւ (խոզի մազեր), մեծ-մեծ ու վայրի խոզերի նման։ Ձեռքի եւ ոտքի մատների եղունդները կճղակների էին փոխուել, ինչպէս որ են գեռնարբիր (գետին